

«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊԸ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ



Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊԸ, տնօրեն

Է. Օհանյան

ԵՐԵՎԱՆ
2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը	7
2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը 7	
2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը	7
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԴՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ	9
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները	14
4.2 Բարեկարգում և կանաչապատում	18
4.3 Ձրամատակարարում և ջրահեռացում	21
4.4 Գազամատակարարում և էլեկտրասնուցում	21
4.5 Ձեռուցում	22
4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում	22
5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	27
5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը	27
5.2 Սելսմիկ բնութագրերը	28
5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը	28
5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ	30
5.5 Օդային ավազան	30
5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը	31
5.7 Ջրային ռեսուրսներ	32
5.8 Բուսական աշխարհ	32
6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	33

6.1	Շինարարության փուլ.....	33
6.1.1	Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները	33
6.1.2	Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում	35
6.1.3	Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	36
6.1.4	Թափոնների առաջացում և կառավարում.....	38
6.1.5	Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ	39
6.1.6	Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումները	40
6.1.7	Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը	41
6.1.8	Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները	41
6.1.9	Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները.....	42
6.	ԲՆԱՊԱՀՅՈՒՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	44
6.1.	Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները	44
6.2.	Մոնիտորինգ	46
7.3.1	Մոնիտորինգային չափագրումներ	47
7.	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	57
8.	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	59
9.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	60
9.1.	Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք	60
9.2.	Հավելված 2. Տիպային (առաջին) հարկի հատակագիծ	61
9.3.	Հավելված 3. Ստորգետնյա հարկի տիպային հատակագիծ	62
9.4.	Հավելված 4. Ջրամատակարարման /ջրահեռացման նախագծման տեխնիկական պայման ..	63
9.5.	Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայման	64
9.6.	Հավելված 6. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան	65
9.7.	Հավելված 7. Շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը ..	66
9.8.	Հավելված 8. Անշարժ գույքի սեփականության վկայական	67
9.9.	Հավելված 9. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան	68
9.10.	Հավելված 10. Մասնակիցների ցանկ	71
9.11.	Հավելված 11. Էլեկտրասնուցման տեխնիկական պայման	Ошибка! Закладка не определена.

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԲԲՀ	Բազմաօնական բազմաբնակարան բնակելի շենք
ԲՄԾ	Բնապահպանական միջոցառումների ծրագիր
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՇԿՆ	Շինարարության կազմակերպման նախագիծ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության անվանումը	«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում
Գործունեության նպատակը	Քաղաքային զարգացման և առևտրա-հասարակական գործունեության խթանում:
Կառուցապատող	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ»ՍՊԸ
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ»ՍՊԸ
Նախագծային ծառայություններ	«ՔՅՈՒՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Երևան, Դավիթաշեն թաղամաս/66 տարածք, Դավթաշեն 0054
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. Փոստ՝ eduard.ohanyan.1986@mail.ru Հեռ.՝ (+374 77) 930 100
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Հալաբյան փողոց 75/1 հասցե
Հողաարածքի մակերեսը	0.7308 հա
Կառուցապատման մակերեսը	4 708 ք.մ, որից 1 630ք.մ վերգետնյա և 3 078 ք.մ ստորգետնյա կառուցապատում
Բնակելի շենքի հարկայնությունը	18 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկեր
Բնակարանների թիվը	255

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1 «Բազմաբնակարան բնակելի համալիրի» (այսուհետ՝ ԲԲՀ) կառուցման աշխատանքները նախատեսվում են իրականացնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոց 75/1 հասցեում:

2 ԲԲՀ նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է «ԲԵՍԹ ՓՐՈՓՐԹԻՍ» ՍՊԸ-Ն (այսուհետ՝ Կառուցապատող), իսկ նախագծային աշխատանքներն իրականացվում են «ՔՅՈՒՓՐՈԶԵՔԹ» ՍՊԸ կողմից: ԲԲՀ-ի նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, Կառուցապատողի, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համաձայն:

3 Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության դասվում են «Գ» կատեգորիա և պահանջում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից գործունեության նախագծային և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ փաստաթղթերի բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:

4 Նախագծվող ԲԲՀ-ի կառույցի կառուցապատման ընդհանուր մակերեսը (ստորգետնյան և վերգետնյա կառույցների մակերեսների հանրագումարը) կազմում է 4 708 ք.մ, ուստի ԲԲՀ-ի նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության, փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

5 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

6 ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

7 Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի և ՀԲ բնապահպանական

ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող բժշկական կենտրոնի աշխատանքային նախագիծը
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

8 Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

9 **ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

10 **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

11 **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

12 **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

13 **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

14 **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

15 **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

16 **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

17 **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

18 **ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30** «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

19 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

20 **Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ


21 Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է «Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոց 75/1 հասցեում գտնվող հողամասում: Նկ.1.-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը Աջափնյակ վարչական շրջանում, մասնավորապես, ներկայացվող գործունեության տեղամասը գտնվում է Հալաբյան փողոցի և Դավթաշեն-Աշտարակ մայրուղու խաչմերուկում:

22 Ինչպես երևում է իրավիճակային հատակագծից, գործունեության տեղամասի անմիջապես հարևանությամբ գտնվում են բուժական հաստատությունների շենքեր, իսկ ամենամոտ հեռավորությունը հողամասի մերձակայքում գտնվող շինությունից կազմում է մոտ 19.9 մ: Ենթակառուցվածքների տեսանկյունից հողամասով անցնում են 0.4 կՎտ լարմանն ստորգետնյա մալուխային գծեր, որոնք ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» կողմից տրամադրված տեխնիկական պայմանի նախատեսվում են տեղափոխել:

23 Բնակելի համալիրի կառուցումը վիզուալ տեսադաշտի խոչընդոտներ բնակչության համար չի առաջացնի, քանի որ տարածքի անմիջապես մերձակայքում չկան բնակելի տներ/շենքեր:

24 Բնակելի համալիրի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.7308 հա: Գործունեության ընթացքում նախատեսվում է 1623 ք.մ մակերեսով շինությունների կառուցում (վերգետնյա կառուցապատման աշխատանքներ) և 3078 ք.մ մակերեսով ստորգետնյա ավտոկայանատեղու կառուցման աշխատանքներ: Նախատեսվում է նաև բնակելի համալիրի տարածքի բարեկարգում՝ սալվածքների և ճանապարհների իրականացում 2761 ք.մ մակերեսով և կանաչապատ գոտիների ստեղծման աշխատանքներ՝ 2924 ք. մ մակերեսով:

Նկ.1 Նախագծվող ԲԲՀ-ի տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում:



25 Նախագծվող բնակելի համալիրի գլխավոր հատակագիծը ներկայացված է Նկ.2-ում:

26 ԲԲՀ-ի նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից մշակված ճարտարապետահատակագծային առաջադրանքի փաստաթուղթը (*Հավելված 1.*), ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, Կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը, ինչպես նաև գործունեության տեղմասում իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները:

4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները

27 ԲԲՀ-ն նախագծվում է 18 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերից: Ստորգետնյա հարկերը նախագծվում են որպես ավտոկայանատեղի, որը ծառայելու է 204 ավտոմեքենաների համար:

28 ԲԲՀ-ն նախագծվում «Ա», «Բ» և «Գ» մասնաշենքերից: «Բ» և «Գ» մասնաշենքերի առաջին վերգետնյա հարկերը նախատեսվում են օգտագործել առևտրահասարակական նպատակով, իսկ «Ա» մասնաշենքի առաջին հարկի մեծ մասը և «Բ» և «Գ» մասնաշենքերի 2-18 հարկերը նախատեսվում են որպես բնակելի հարկեր: Յուրաքանչյուր բնակելի հարկում նախատեսվում է տիպային 17-18 բնակարաններ, իսկ 15-18 հարկերում հարկայնության բարձրացմանը զուգահեռ բնակարանների քանակը նվազում է: Բնակարանների ընդհանուր քանակը ԲԲՀ-ում կկազմի 255: Հարկերի տիպային նախագիծը ներկայացված է *Հավելված 2-*ում:

29 ԲԲՀ-ի հիմնական մուտքը նախատեսվում է Հալաբյան փողոցից, իսկ երկրորդական մուտքը՝ շտապ օգնության ծառայության տարածքից: Նախագիծը այնպես է մշակվել, որ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շտապ օգնության ծառայության մեքենաները կկարողանան երթևեկել համալիրի տարածքով, ինչը կկրճատի երթևեկության ծանրաբեռնվածությունները:

30 ԲԲՀ-ի բոլոր բացվածքները դեպի պատշգամբ նախատեսվում են իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքում նախատեսվում է վերելակ, աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ, իսկ

ավտոհանգրվանի հարկերը միմյանցից առանձնացված կլինեն ինքնաշխատ դարպասներով:

31 Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բնակելի շենքը նախատեսվում է միաձույլ երկաթ/բետոնե (ե/բ) շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: ԲԲՀ-ի տանիքը նախատեսվում է հարթ և կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումներով:

32 Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն (100 մմ հաստ.) հանքաքամքակե ջերմամեկուսիչով և կերեսպատվեն (30x 330 մմ հաստ.) տրավերտինե սալերով:

33 Բնակելի համալիրի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են առանձնացված հորաններ ինժեներական ցանցերի (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրասնուցում) իրականացման համար:

34 ԲԲՀ-ի նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված թեքահարթակները՝ արտաքին մուտքերում:

35 Ըստ գործող շինարարական նորմերի՝ նախատեսվում է նաև նոր էլեկտրասնուցման և լուսավորության ցանցեր, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր:

36 Ներկայացվող գործունեության հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները բերվում են *Աղյուսակ. 1.*-ում:

Աղ.1 ԲԲՀ-ի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները:

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
հողամասի մակերես	հա	0.7308
շինությունների (վերգետնյա) կառուցապատման մակերես	ք.մ	1623
ավտակայարանի կառուցապատման մակերես (ստորգետնյա)	ք.մ	3078
շենքի բարձրությունը (հատակագծային նիշից)	մ	61
մասնաշենքերի թիվը	հատ	3
վերգետնյա հարկեր	հատ	15-18
ստորգետնյա հարկեր	հատ	3
ընդ. բնակարանների թիվը	հատ	255
բնակարանները՝ յուրաքանչյուր հարկում	հատ	17-18
ավտոկայանատեղիներ	հատ	204
բացօթյա խաղահրապարակ	ք.մ	652
բացօթյա մարզահրապարակ	ք.մ	234
բացօթյա ավտոկայանատեղի	ք.մ	128.8
<i>Բարեկարգում և կանաչապատում</i>		
բարեկարգվող գոտու ընդհ. մակերես	ք.մ	5685
սպասարկող ճանապարհներ և սալվածքներ	ք.մ	2761
կանաչապատ գոտի ընդհ. մակերես	ք.մ	2924

«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

Նկ. 2 Նախագծվող «Բազմաբնակարան բնակելի շենքի» գլխավոր հատակագիծը:



4.2 Բարեկարգում և կանաչապատում

37 ԲԲՀ-ի տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում շենքի շուրջ կատեղծվեն շուրջ 2289 ք.մ ընդհանուր մակերեսով երթևեկելի ասֆալտապատ և սալապատ գոտիներ, ինչպես նաև կիրականացվի 2924 ք. մ մակերեսով կանաչ գոտի: Տարածքի «Կանաչ գոտիների բարեկարգման նախագիծ»-ը համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ, որի համաձայն նախատեսվում են արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկությունների համապատասխանող ծառատեսակների տնկում: Այսպիսով, կանաչ գոտիներում նախատեսվում է տնկել եղնիններ (7 հատ), կաղնիներ (4 հատ), հացենիներ (9 հատ), ակացիաներ (6 հատ), ինչպես նաև՝ դեկորատիվ ծառատեսակներ՝ գնդաձև թույաներ (106 հատ) և ծորենիներ (54 հատ): Կանաչապատ գիտիներում կիրականացվի նաև բազմամյա խոտաբույսերի ցանք, մասնավորապես, համալիրի տարածքում նախատեսվող բացօթյա սպորտային և խաղահրապարակների մակերևույթը նախատեսվում է խոտածածկ: Կանաչապատման հատակագիծը ներկայացված է Նկ.3-ում, իսկ հաստատված նախագիծը ամբողջությամբ՝ սույն հայտին կից:

38 Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով, որը նախագծվում է $\Phi=20-40$ մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակներից, $\Phi=15$ մմ ցողացիներից, $\Phi=20$ մմ ոռոգման վինտիլներից և $\Phi=20-40$ մմ արկղով փականներից: Ոռոգման խողովակաշարը կմոնտաժվի 20 սմ խորությամբ, իսկ ոռոգման շուրքը կվերցրվի տարածքով անցնող ոռոգման քաղաքային ջրագծից: Ոռոգման ցանցի նախագիծը ներառված է «Կանաչապատ գոտիների բարեկարգման նախագիծ»-ում:


39 Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը (1169 խ.մ) կմատակարարվի լիցենզավորված մատակարարներից՝ պահպանելով ՀՀ-ում գործող օրենքները:

40 Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի ԲԲՀ-ի սպասարկման աշխատանքների շրջանակում, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ

«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կաշռականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Նկ. 3 Բնակելի համալիրի տարածքի կանաչապատման գոտիների բարեկարգման նախագիծ:



4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

41 Բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված No ԱՄ-583 տեխնիկական պայմանի (29/11/2019թ.) համաձայն (*Հավելված 4.*)։ Տեխնիկական պայմանի ժամկետի լրացման հետ կապված, համաձայն գործող կարգի, կառուցապատողը կդիմի «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին ժամկետի երկարաձգման համար, որը չի ենթադրում ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացների կազմակերպման (միացման կետերի) փոփոխություն։

42 Այսպիսով, ԲԲՀ-ի ջրամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի Հալաբյան փողոցի եզրով անցնող «Արզականի» d=800 մմ քաղաքային ջրատարից։

43 Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել Հալաբյան փողոցով անցնող «Չարենցավան-Երևան» d=1200 մմ կոլեկտրին միացմամբ։

44 Նախագծվող ԲԲՀ-ի տարածքից մակերևութային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել Հալաբյան փողոցով անցնող d=600 մմ հեղեղատարին միացմամբ։

45 ԲԲՀ-ում կենտրոնացված տաք ջրամատակարարման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կկազմակերպվի բնակիչների կողմից լոկալ լուծումների իրականացմամբ։

4.4 Գազամատակարարում և էլեկտրասնուցում

46 Բնակելի համալիրի գազամատակարարման գործընթացը կիրականացվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի համաձայն։

47 Էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն ՏՊ-ՃՀԱՕ.4/0301 տեխնիկական պայմանի (12/12/2019թ.), կիրականացվի ՏԵ 0644 ենթակայանի 0.4 կՎտ վահանից՝ վերակառուցելով ՏԵ0644 էլեկտրական ենթակայանը։ Նախատեսվում 33.5 ք. մ մակերեսով

Էլեկտրական ենթակայանի կառուցում ԲԲՀ-ի հողամասի անմիջապես հարևանությամբ: Ըստ տեխնիկական առաջադրանքի՝ կառուցապատողի կողմից կիրականացվի նաև հողամասով անցնող 6 կՎտ և 0.4 կՎտ լարման ստորգետնյա մալուխային գծերի տեղափոխման աշխատանքները:

4.5 Ջեռուցում

48 Նախագծվող ԲԲՀ-ում կենտրոնացված ջեռուցման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կիրականացվի բնակիչների կողմից բնակարաններում կաթսաների տեղադրմամբ:

4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում

49 Բնակելի համալիրի *նախաշինարարական աշխատանքների* փուլում, համաձայն շինաշխատանքների կազմակերպման նախագծի, կիրականցվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Շինհրապարակի կազմակերպման նախագիծը (ՇԿՆ) բերվում է *Հավելված 6.-ում*: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես բնակելի համալիրի հողատարածքի վարչական սահմանների ներսում, որտեղ ըստ պլանի կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- հողատարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում
- տարածքի համահարթեցման գործողություններ
- լուսատուների տեղադրում և հրապարակի լուսավորության (≥ 20 լք) ապահովում
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, գուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը

- կատեղծվեն շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիներ և այլ միջոցառումներ:

50 Բնակելի համալիրի *շինարարական աշխատանքները կմեկնարկեն* տարածքում առկա 279.7 ք.մ մակերեսով ինքնակամ շինությունների ապամոնտաժման աշխատանքներից: Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը, համաձայն ապամոնտաժման աշխատանքների նախագծի, հաշվարկվում է շուրջ վեց ամիս, որոնք կիրականացվեն բուն կառուցապատման աշխատանքներին զուգահեռ: Նշված շինությունները իրենցից ներկայացնում են մեկ երկհարկանի քարե և բետոնե կառույց և կիսավեր կառուցվածքներ: Ապամոնտաժման գործողությունները կիրականացվեն բացառապես կտրող գործիքներով և կբացառվի քանդող հարվածային գործքիների կիրառումը:

51 Տեղամասի հողային աշխատանքները կիրականացվեն հիմնականում մեքենայացված եղանակով (KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատոր), իսկ դժվար հասանելի մասերում՝ կիրականացվեն ձեռքով:

52 Հողային աշխատանքների ընթացքում՝ ըստ աշխատանքային նախագծի, գնահատվում են ստորև ներկայացվող ծավալները.

- *հեռացվող գրունտ/հանույթ՝ 42038 խ. մ (մեքենայացված) + 382 խ.մ (ձեռքով)*
- *հետլիցք՝ 7919 խ.մ (մեքենայացված) + 280 խ.մ (ձեռքով)*
- *տեղափոխվող և թափոնակույտվող հանույթ՝ 34 221մ:*

53 Հողային աշխատանքների ընթացքում առաջացած ավելորդ գրունտը կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում, իսկ հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է շուրջ 3.5 ամիս:

54 Շինարարական աշխատանքները կիրականացվեն մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենա-սարքավորումները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն: Աղյուսակ 2.-ում բերվում են աշխատանքների ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:

Աղ. 2 Շինարարության ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:

Անվանումը	Չափման միավորը	Քանակ
Էլեկտրաէներգիա	ԿՎտ	115.0
Ջուր (արտադրական)	լսմ/օր	8.52
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

55 Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից:

56 Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Առանձին ամրանային ձողերը, հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կկատարվի դրանց պահեստավորումը և տեղադրումը:
- Բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով Երևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ՝ շինարարական կազմակերպության բազա՝ հետագայում շինհրապարակ առաքման նպատակով:

57 Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի

ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռուզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան: Պահման վայրերը հաշվի են առնված հրապարակի կազակերպման պլանում, տես *հավելված 6*:

58 Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից:

59 Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը կիրականացվի ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

60 Բնակելի համալիրի շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը բերվում է *Հավելված 7*.-ում: Կառուցապատման աշխատանքների տևողությունը՝ ըստ մշակված շինաշխատանքային կազմակերպման նախագծի (ՇԿՆ), հաշվարկվում է 30 ամիս:

61 Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքներում աշխատողների միջին թիվը՝ ըստ ՇԿՆ-ի, հաշվարկվել է 45 մարդ, որից ինժեներական կազմը՝ 5 մարդ, ծառայողական աշխատողներ (մեքենավար և օգնական)՝ 12 մարդ, արհեստագործներ և բանվորներ՝ 28 մարդ:

62 Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը ներկայացված է Աղ. 3-ում ստորև: Շինաշխատանքների ընթացքում մեքենաների կայանումը կկազմակերպվի շինարարական հրապարակում և շինարարական ընկերության բազայում:

Աղ. 3 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ:

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	Hyundai 170W-7	1
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կրունկ	TEREX СТТ 91-TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	3
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	3
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
15	Թրթրագլղոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

63 Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 75/1 հասցեում: Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը գտնվում Հրազդան գետի աջ ափին: Բնութագրվող տարածքն ունի թեքություն, որի վերին և ստորին բացարձակ նիշերի տարբերությունը կազմում է 5 մ:

64 *Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքի տեսանկյունից*, համաձայն գրական տվյալների և կատարված ուսումնասիրությունների, բնութագրվող տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ դոլերիտային բազալտներ, որոնք ծածկում են ժամանակակից տեխնոգեն և էյուվիալ-դեյուվիալ առաջացումները: Բնութագրվող տեղամասը, վերնից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Լիցքային գրունտներ, տարածված են ամենուր, հզորությունը՝ 1-3 մ:

Շերտ – 2 Կավավազ խճով և մանրախճով, տարածված են ամենուր հզորությունը՝ 1.5-5 մ: Երկրորդ կարգի գրունտներ:

Շերտ – 3 Ճաքճքված, խոշորաբեկորային բազալտներ, տեղ-տեղ ջարդրտված: Տարածված են ամենուր, հզորությունը՝ 23.5-35 մ:

65 *Հիդրոերկրաբանական տեսակետից* ուսումնասիրվող տարածքը աղքատ է գրունտային ջրերից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստորգետնյա ջրերի մակարդակը տեղամասում գտնվում է ցածր հորիզոններում և չեն հայտնաբերվել մինչև 30 մ խորության փորվածքներում: Գոյություն ունեցող գրական տվյալների համաձայն՝ գրունտային ջրերը գտնվում են 70 մ և ավելի խոր հորիզոններում:

66 *Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ ԲԲՀ-ի շինարարական աշխատանքների իրականացման համար:

67 Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

5.2 Սեյսմիկ բնութագրերը

68 Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տեղամասը գտնվում է սեյսմիկ *երրորդ ցուտու*: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A = 0.4g$ և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

61. Բնութագրվող տարածքը, քանի որ գտնվում է Երևան քաղաքում բնորոշ է «Տաք» կլիմայական ցուցանիշները՝ ըստ ՀՀ շինարարական կլիմայաբանության (ՀՀՇՆ II-7.01-2011): Բնութագրական են շոգ և չորային ամառները՝ հուլիսյան միջին ջերմաստիճանը $+24-25$ °C, և ցուրտ ձմեռները՝ -2.9 °C միջին հունվարյան ջերմաստիճանով: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ:

62. Աղ. բերվում են Երևան քաղաքի «Արաբկիր» օդերևութաբանական կայանի դիտարկումների տվյալները:

Աղ.4 Երևան «Արաբկիր» օդերևութաբանական կայանի կլիմայական դիտարկումների տվյալները:

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	1090	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակա-վայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա- ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակա-վայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ												Չյան ծածկույթը			
	օրական առավելագույնը												տարե-կան	տասնօրյա առավելա-գույնը, սմ	օրերի թիվը	ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ
	ըստ ամիսների															
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան	<u>28</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>48</u>	<u>55</u>	<u>29</u>	<u>16</u>	<u>8</u>	<u>11</u>	<u>31</u>	<u>30</u>	<u>28</u>	<u>353</u>	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

63. Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը, համաձայն «Արաբկիր» կայանում իրականացված դիտարկումների, կազմում է $+41^{\circ}\text{C}$, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -21°C : Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է մոտ 353 մմ: Տեղանքում գերակշռում են հարավային և հարավ-արևմտյան ուղղության քամիները և 25 տարվա ընթացքում հնարավոր են 25մ/վ, 50 տարվա մեջ 27մ/վ ուժգնության քամիներ: Չյան ծածկույթի հաստությունը հասնում է 50սմ: Չյան բեռնվածքի ճնշումը 70կգու/մ² է: Կայուն ձյան ծածկույթ չի ձևավորվում: Միջին տվյալներով ձմեռը սկսվում է դեկտեմբերի երկրորդ կեսից և վերջանում մարտի առաջին կեսին: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 60 սմ:

5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ

64. Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:


5.5 Օդային ավազան

65. Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերնութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՀՄԿ-ի 2019 թվականի տարեկան հաշվետվության՝ Երևան քաղաքում ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են 0.005 մգ/մ³ տիրույթում և չեն գերազանցել նշված աղտոտիչների գործող սահմանային թույլտրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) ($ՍԹԿ_{\text{NO}_2} = 0.04$ մգ/մ³, $ՍԹԿ_{\text{SO}_2} = 0.05$ մգ/մ³):

66. Երևան քաղաքում ընդհանուր փոշու միջին տարեկան և ամսական կոնցենտրացիաները 2020 թ.-ին եւս չեն գերազանցել ՍԹԿ-ները ($ՍԹԿ_{\text{PM}} = 0.015$ մգ/մ³), սակայն քաղաքի որոշ հատվածներում՝ հիմնականում Կենտրոն համայնքում, ընդհանուր փոշու մասնիկների կոնցենտրացիաները որոշ օրերի գերազանցել են սահմանային թույլտրելի կոնցենտրացիաները:

67. Նկ. 3-ում ներկայացված են մթնոլորտային օդում 2020 թվականի հունվար-մարտ (դիտարկվում է այս սեզոնը, քանի որ շինարարական աշխատանքները կմեկնարկվեն այս ամիսներին) ամիսներին առաջնային աղտոտիչների չափված կոնցենտրացիաները, որոնք դիտվել են ՍԹԿ-ների տիրույթում: Բացառություն են կազմել փոշու ընդհանուր մասնիկների մակարդակները, որոնց չափաքանակները ենթարկվել են 64 պարագրաֆում նկարագրված օրինաչափություններին:

Նկ. 3 Երևան քաղաքում մթնոլորտային օդում առաջնային աղտոտիչների կոնցենտրացիաները 2020 թվականի հունվար- փետրվար ամիսներին:



5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը

63. Կառուցապատվող տարածքը ըստ սեփականության վկայականի (N 20112019-01-0049) հանդիսանում է Կառուցապատողին՝ «ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԻՍ» ՍՊԸ, սեփականության իրավունքով տրամադրված գույք: Անշարժ գույքի նկատմամբ իավունքների պետական գրանացման վկայականը ներկայացված է Հավելված 8.-ում: Հողամասը՝ ըստ նպատակային նշանակության, հանդիսանում է բնակավայրային և ունի հասարակական

կառուցապատման նշանակություն: Համաձայն սեփականաշնորհման վկայականի՝ հողամասի մակերեսը կազմում է 0.7308 հա, որտեղ առկա են 279.7 ք.մ մակերեսով ինքնակամ շինություններ:

64. Բնութագրվող տարածքում բացակայում է բուսահողը և ներկայացված է խճաքարակավազային ծածկությամբ:

5.7 Ջրային ռեսուրսներ

65. Հիդրոերկրաբանական տեսակետից, համաձայն գոյություն ունեցող գրական տվյալների և կատարված հետազոտությունների, բնութագրվող տեղամասը աղքատ է գրունտային ջրերով: Գրունտային ջրերը գտնվում են 30 մ-ից խորը հորիզոններում:

66. Նախագծվող բնակելի համալիրի տարածքի մերձակայքում այլ մակերևութային ջրային մարմիններ չեն հայտնաբերվել:

5.8 Բուսական աշխարհ

67. Բնութագրվող հողակտորը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

68. Հողամասում աճում են թվով 9 ծառեր և ինքնաբերաբար աճած թփեր:

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

69. Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են բնակելի համալիրի շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շինգործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

70. Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիքներից:

6.1 Շինարարության փուլ

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

71. Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K₁ –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K₂ –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աեռոզոլային մասնիկների, 0.02

K₃ –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 3

K₄ –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K₅ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K₆ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է մոտ 1ամիս կամ

3.5 ամիս x 22 օր x 8 ժամ = 616 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 42420 խ. մ կամ 67872 տոննա:

67872 տոննա /616 ժամ = 110.181 տ/ժ

Այսպիսով՝

$Q=(0.05 \times 0.02 \times 3 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 110.181 \times 10^6) / 3600 = 2.203$ գ/վ կամ

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$2.203 \text{ գ/վ} \times 616 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ/10}^6 = 4.89$ տ

72. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի տարածքի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Հետևաբար, փոշու արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար

ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ
- փոշի առաջացնող սորուն նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

73. Օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացվում է *Աղյուսակ 6.-ում (տես 2. ենթաբաժին, Օդի աղտոտում և փոշու կառավարում)*:

6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

74. Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և կանոնավոր կերպով կհսկվի վերջիններիս տեխնիկական վիճակը, իսկ անսարքությունների հայտնաբերման դեպքում կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

75. Սոցիալական ազդեցությունների մեղմացման տեսանկյունից հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն կեսօրվա ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

76. Շինարարական գործողությունների ընթացքում հնարավոր թրթռումների մակարդակներից ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝

հաշվի առնելով զգայուն ազդակակիրների հեռավորությունը բնակելի համալիրի տարածքից (≥ 19.9 մ): Բացի այդ շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերը, քանի որ բնակելի համալիրի կառուցման ընթացքում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

77. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է Աղյուսակ 6.-ում (2 ենթաբաժին, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

78. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

79. ԲԲՀ-ի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած փոշու մակարդակները և դրանց հնարավոր տարածման ռիսկերը կկառավարվեն իրականացնելով շինարարական մակերեսների կանոնոնավար ջրցանում:

80. *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 5 213 ք.մ

K – 1 մ² օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ³,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝

22 օր x (30 ամիս – (5 (նոյեմբերից-ապրիլ) x 2) ամիս = 22 օր x 20 ամիս = 440 օր

K₁ – ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝ $V = 5\,213 \times 0.0015 \times 440 = 3440.6 \text{ մ}^3$ /շինարարություն ժամանակ

81. Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 3440.6 մ^3 : Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Ջրցանի միջոցառումները հրապարակում կկատարվեն պատշաճ մակարդակով՝ կանոնավոր և հաշվարկված ջրցանի ցուցանիշների շրջանակում՝ բացառելով հոսքաջրերի առաջացումը և ջրային ռեսուրսների ոչ խելամիտ օգտագործումը:

82. *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 17 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 մ^3 ,

n_1 - բանվորների թիվն է՝ միջին 28 մարդ

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ 0.025 մ^3 /մարդ օր

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր
 $\times 30 \text{ ամիս} = 660 \text{ օր}$:

Այսպիսով՝ $W = (17 \times 0.016 + 28 \times 0.025) \times 660 = 641.52 \text{ մ}^3$ / շինարարություն ժամանակ կամ 0.972 մ^3 /օրական:

83. Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը, ներառյալ ջրցանի համար նախատեսված ջուրը կվերցրվի բնակելի համալիրի հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից:

84. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ բնակելի համալիրի հողամասի մերձակայքում չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ:

85. Այլ անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի

համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

86. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում ևս չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը և այլ արտանետումները շինարարական հրապարակից: Շին գործողությունների ընթացքում գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր՝ բետոնախառնիչների լվացումից) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման տարա (≥ 10 խ.մ), որտեղ կհեռացվեն կեղտաջրերը, ինչպես նաև տեղումների ընթացքում հնարավոր հոսքաջրերի առաջացման դեպքում վերջիններս ևս կհեռացվեն տարայում կամ կուղղորդվեն տեղամասին կից քաղաքային հեղեղատար: Տարայում հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական աշխատանքներում:

6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում

87. Շինարարական աշխատանքների ընթացքում կգոյնա շուրջ 34221 խ.մ շինաղբ/ավելորդ գրունտ և 260 խ.մ շինաղբ, որը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշն երեք օրը մեկ) տեղափոխվելու է հողամասից Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

88. Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող տեսակային կազմով վտանգավոր թափոնների առաջացում (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ.).

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Քանակը
«Շենքերի քանդումից առաջացած շին աղբ»	91200601 01 00 4	IV	280 խ. մ
«Կնցադային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV	≤ 5 կգ/օր
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54100303 02 03 3	III	≤ 25 լ/շին
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100301 02 03 3	III	

89. Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով (ամենաուշն երկու օրը մեկ) վարչական շրջանի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբաման:

90. Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

91. Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է *Աղյուսակ 6.-ում* (5. ենթաբաժին, Թափոնների կառավարման պլան):

6.1.5 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

92. Ներկայացվող գործունեության ընթացքում հողամասում չկա ազդեցության ենթակա բուսահող: Հողային աշխատանքներից առաջացած գրունտ գնահատվում է հետագա օգտագործման համար ոչ պիտանի և կհեռացվի ազբավայր:

93. Հրապարակում քայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային շետերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

94. Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում* (5 և 6 ենթաբաժին, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

6.1.6 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումները

95. ԲԲՀ-ի նախագծին և շին աշխատանքների կազմակերպմանը խանգարում են թվով 2 ծառեր, որոնք նախատեսվում են հատել, իսկ երկու պտղատու ծառերը՝ կվերատնկվեն: Աշխատանքներին խանգարող ինքնակամ աճած թփերը և խոտը կհեռացվի հողային/փորման աշխատանքների ժամանակ և ավելորդ գրունտի հետ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

96. Ծառերի (2 հատ) վերատնկման աշխատանքները կիրականացվեն գարնանային/աշնանային տնկարկի ժամանակահատվածում: Վերատնկման աշխատանքներից առաջ նախապես կիրականացվի ծառերի էտում և փոսորակների մշակման գործողությունները, իսկ վերատնկված ծառերի հետագա խնամքը կիրականացվի շինարարական ընկերության կողմից՝ շինարարության փուլում:

97. Գործունեության շրջանակում նախատեսվող կանաչապատման աշխատանքների շրջանակը ներկայացված է 4.2 ենթագլուխում:

98. Շինարարության ընթացքում հողատարածքում, ինչպես նաև գործունեության մերձակայքում առկա բուսականության պահպանությանը և կառավարմանն ուղղված համալիր միջոցառումների ցանկը բերվում է *Աղյուսակ 6.-ում* ներկայացված

բնապահպանական միջոցառումների ծրագրում (2 ենթաբաժին, Բուսականության պահպանության և կառավարման պլան):

6.1.7 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

99. Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 14:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

100. Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացատրվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են *Աղյուսակ 6.-ում (1 ենթաբաժին, Աշխատանքի և առողջության ապահովման պլան)*, մասնավորապես՝ կիրականացվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

6.1.8 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

101. Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Նշված ազդեցությունները կմեղմացվեն շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպելով շարասյուներով, սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի դեպքում, այն կկազմակերպվի

նվազագույնը 30 բույս ինտերվալով: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 6.-ում (4. գլուխ, Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարում):

6.1.9 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

102. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

103. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:
 - Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:
 - Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
 - Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:
 - Արգելվում է տանիքում և բարձրության վրա աշխատանքներ իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքերում:
 - Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գազոգներատորի մոտակայքում ծխելը:
 - Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:
104. Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

105. Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի ԲԲՀ-ի կառուցման բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) բնապահպանական միջոցառումների ծրագրի (ԲՄԾ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ, որի շրջանակում նախատեսվող միջոցառումները համալիր ներկայացված են *Աղյուսակ 6*-ում: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

106. ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԾ-ի իրականացման համար և ընտրվելու է մրցութային կարգով:

107. Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում
- շինարարական աղբ/ավելորդ գրունտի կանանոնավոր հեռացում և թափոնակույտում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման

- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- շինհրապարակից դուրս գալիս կապահովվի մեքենաների անիվների լվացման միջոցառումներ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14.00-18:00
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնստկտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում
- ԲԲՀ-ի համալիրում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:

108. ԲԲՀ-ի կառուցապտման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է **36597.794** հազ. ՀՀ դրամ (*Աղյուսակ 5*): Նշված արժեքը ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ ավելորդ գրունտի հեռացման, ինչպես նաև կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են

առնված նախագծի ծավալաթերթերում: ԲՄԾ-ում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի նախահաշվային արժեքներում նախատեսվող օժանդակ ծախսերի գումարից:

Աղ.5. Մեղմացնող միջոցառումների ուղիղ (հարկերը հաշվի չեն առնված) արժեքները:

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Ցուցանիշը	Գումարային արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ժամանակացույցը
հանրային ծանուցում	հատ	2	10	նախագծման փուլ
բնապահպանական փորձաքննություն	-	-	15	նախագծման փուլ
շին աղբի/գրունտի տեղափոխում	խ. մ	34221+260	35308.544	շինարարության փուլ
ծառերի վերատնկման աշխատանքներ	հատ	2	0.84	շինարարության փուլ
ծառերի տնկում (ներառյալ փոսերի մշակման և տնկման գործողություններ)	հատ	186	444.69	կանաչապատում
Բազմամյա խոտաբույսերի ցանում (սերմը 1ք. մ- 0.035 կգ)	ք. մ	2924	818.72	կանաչապատում
Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ				36597.794

6.2. Մոնիտորինգ

109. ԲԲՀ-ի Կառուցապատողի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու, որպեսզի վերահսկվի ԲՄԾ-ում նախահաշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է Հավելված 9.-ում:

110. Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու

են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են Կառուցապատողին նկատված անհամապատասխանությունների մասին:

7.3.1 Մոնիտորինգային չափագրումներ

111. Ինչպես նկարագրվեց ենթաբաժին 6.1.1-ում՝ ներկայացվող գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու արտանետումներ շինաշխատանքների, մասնավորապես՝ հողային աշխատանքների իրականացման ընթացքում: Հաշվի առնելով ներկայացվող գործունեության ընթացքում հողային աշխատանքների ծավալը և ինտենսիվությունը՝ գործունեության տեղամասում գետնամերձ շերտում փոշու մասնիկների կոնցենտրացիաների դիտարկումները կիրականացվեն հարևան ազդակակիրի կողմից համապատասխան բողոքների դեպքում և սույն հաշվետվությունում ներկայացվող փոշու մասնիկների կոնցենտրացիաների մոնիտորինգային չափագրումների պլանին համաձայն, այն է.

112. Փոշու մասնիկների կոնցենտրացիաները կորոշվեն իրականացնելով շաբաթական մեկ նմուշառում: Հաշվի առնելով հողային աշխատանքների տևողությունը՝ նմուշառումների գումարային քանակը գնահատվում է՝

$$3.5 \text{ ամիս} \times 4 \text{ շաբաթ} \times 1 \text{ նմուշառում} = 14 \text{ նմուշ:}$$

113. Փոշու մասնիկների չափագրումները կիրականացվեն գործունեության իրականացման տեղամասում: Չափագրումների իրականացման համար Կառուցապատողը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:

«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

Աղ. 6 Բնապահպանական միջոցառումների ծրագիր (ԲՄԾ)

Մեղմացնող միջոցառումներ			
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈԻԼ			
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	– Մշակվել է նախագծվող ԲԲՀ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցություն նախնական գնահատման հայտը և ներկայացվել է ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության, դրական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԴԹԻՍ» ՍՊԸ
2. Հանրային լուումներ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել ԲԲՀ-ի կառուցման ժամկետների վրա:	– Նախագծվող ԲԲՀ-ի կառուցման գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 22/07/2020թ. -ի համարում: – Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող պետական փորձաքննության շրջանակում:	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԴԹԻՍ» ՍՊԸ, Երևանի քաղաքապետարան
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ (ԳՄՈՒՌՑՈՒՄ)			
1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԲՀ-ի կառուցպատման գործընթացի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող են առաջացնել	– Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: – Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, մասնավորապես, իրականացնել տարածքի ցանկապատում,	Կապալառու

	աշխատանքի առողջության անվտանգության խնդիրներ: և	ստեղծել պահակակետեր, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ այլ: – Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում և բոլոր մեքենաներում: – Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատոսփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: – Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով: – Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ-ին: – Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորումը պատշաճ պետք է գրանցել աշխատանքի անվտանգության վարման գրանցամատյանում (ՀՀՇՆ I- 3.01.01-2008): – Անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը: – Անհրաժեշտ է ապահովել բանվորների աշխատանքի պաշտպանության միջոցառումները անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:	
--	--	---	--

		Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պետք է պահպանվեն շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:	
2. Շրջակա միջավայրի պահպանության պլան			
5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները. պամոնտաժման և կառուցման աշխատանքներ, շինանյութերի և շինաղբի փոխադրումներ, և այլն:	- Փոշու և այլ ծխազագերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուման հետևանքով: - Աղմուկի և թրթռումների մակարդակի աճ շին աշխատանքների ընթացքում:	Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում - Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել ջրցանման և փոշենստեցման միջոցառումներ: - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել պաստառներով ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումը բացառելու համար: - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը (<30 կմ/ժ) փոշու և այլ ծխազագերի քանակը նվազեցնելու նպատակով: - Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը: Աղմուկի և թրթռումների կառավարում - Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակալիքների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: - Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 14:00-18:00: - Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն	Կապալառու

		համապատասխան խլացուցիչներով: – Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից: – Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում: – Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով: • Բուսականության պահպանում և կառավարում – Անհրաժեշտ է տեղամասում մերձակայքում առկա բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից, մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել թվով երկու ծառերի վերատնկում: – Վերատնկման աշխատանքներն իրականացնել աշնանային կամ գարնանային տնկարկի ժամանակահատվածում, նախապես իրականացնելով փոսորակների մշակման և ծառերի էտման գործողությունները, ինչպես նաև պահպանելով կանոնավոր ոռոգումը և խնամքը:	
3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան			
7. Շին հրապարակի կազմակերպում:	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:	– Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման սխեմային համաձայն՝ ապահովելով նախատեսվող մուտքերը և ելքը: – Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անթափանց ցանկապատում ողջ շին-հրապարակի պարագծով: – Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում, ինչպես նաև փակցնել հակահրդեհային	Կապալառու

		անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն տեղադրում: - Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով:	
4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան			
8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	- Երթևեկության խափանումներ - Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ - հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում - շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում	- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: - Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով: - Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ: - Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: - Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով: - Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: - Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով: - Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպչային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական	Կապալառու

		աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար: - Անհրաժեշտ է մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:	
5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան			
9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն	- Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում: - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը: - Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում: - Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին: - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:	Կապալառու

		– Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: – Քիմիական և այլ վտանգավոր նյութերն, վառելանյութն պետք է օգտագործել միայն շինմոնտաժային աշխատանքներում և բացառել այլն նպատակով օգտագործումը: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով և պատնեշով: – Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:	
6. Թափոնների և նյութերի կառավարման պլան			
10. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	- Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրին:	– Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես գործունեության ընթացքում նախատեսված աղբավայր (100 մ հեռավորության վրա գտնվող հողատարածք): – Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթնեկության խոչընդոտները կանխելու համար: – Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր, դրանց առաջացման դեպքում: – Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում: – Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր: – Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբաման,	Կապալառու

		իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման: - Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարական շրջանում մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը շին թափոնների հեռացման նպատակով: - Անհրաժեշտ է հրապարակում պահել կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն) հեռացման համար նախատեսված տարա (≥ 10 խ.մ), որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը կարելի կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/չոր մնացորդը հեռացնել շին/աղբի հետ: - Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է պահել անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական) կամ ավազե հիմքի վրա հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը կառավարելու նպատակով:	
7. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան			
11. Շինհրապարակի Վերականգնումը, տեղամասի բարեկարգում/կանաչապատում	- Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:	- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն: - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: - Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը: - Անհրաժեշտ է կատարել հանրային տարածքի բարեկարգման աշխատանքները համաձայն նախագծի բարեկարգման և կանաչապատման պլանի համաձայն:	Կապալառու
ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼ			
12. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	- Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կաջողականությունը և աճը:	“ԲԵՄԹ ՓՐՈՓԵԴԹԻՍ” ՍՊԸ Կապալառու


«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

		Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները:	
13. Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	- Անհրաժեշտ է ներառել հանրային կանաչապատ գոտին ԲԲՀ-ի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: - Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:	“ԲԵՍԹ ՓՐՈՓԵԴԵԻՄ» ՍՊԸ

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

114. Ներկայացվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է ա.թ. օգոստոսի 03-ին՝ ժամը 11:00-ին, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի թաղապետարանի շենքում՝ Ա.Սարգսյան փողոցի շենք 5 հասցեում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի հուլիսի 22-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն, այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Հանրային քննարկման մասին հայտարարությունը (Նկ.4) և նախագծային փաստաթղթերը տեղադրվել են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում (www.yerevan.am):

Նկ.4 Հանրային քննարկման մասին հայտարարությանը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, տպագրված 22.07.2020թ.-ի համարում:



S

115. Հանրային քննարկմանը (Նկ.5) ներկա են գտնվել շահագրգիռ և ազդակակիր կողմեր, ներառյալ ներկայացուցիչներ նախագծային և կառուցապատող ընկերությունից, Երևանի քաղաքապետարանից և Աջափնյակ վարչական շրջանից և այլ մասնակիցներ:

Նկ.5 Հանրային քննարկում, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, 03 օգոստոս, 2020 թվական:



116. Քննարկմանը ներկա մասնակիցների ցանկը (1 էջ) ներկայացվում է Հավելված 10.-ում, իսկ քննարկման արձանագրությունը և տեսաձայնագրությունը կներկայացվեն բնապահպանական փորձաքննության ներկայացվող սույն հայտին կից:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
2. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
3. ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
4. ՀՀ 2011թ.-ի մարդահամարի ցուցանիշները: ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները: URL: <http://armstat.am/am/?nid=509>
5. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:


«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


9.1. Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք

		Ձև N 1-2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՍԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) N 01/18-04/2-55571-578 «10» «04» 2020թ.		
Օբյեկտ	Բազմաբնակարան բնակելի համալիր (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կարգեզորի)	
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, մոնիթորինգ, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակված քնդույունը, եզրույթները, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))		
Գտնվելու վայրը	Ազադեպետական շրջան, Հայրապետական փողոց, հ.75/1	
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)		
Կառուցապատող	«ԲԵՆԱԹ ՓՐՈՓԵԿՏԻՍ» ՍՊ ընկերություն (ք. Երևան, Կոմիտաս 19/1, հ.23/1 հեռ.՝ 077930100)	
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական անձի անունը, ազգանունը, քննադատական վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)		
Առաջադրանքի տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայտը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 18.02.2020թ. տրված՝ հ.01/11.1/909-2020 գրությունը, 03.06.2020թ. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի հ.1.1/9.1/1355-20 գրությունը, 16.04.2020թ. Արվածքաբանության ազգային կենտրոնի գրությունը, 23.06.2020թ. «ՀՏԱԴՐՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության հ.471 գրությունը, անշարժ գույքի նկարագրի իրավունքների պետական գրանցման հ. 20112019-01-0049 վկայականը, էսքիզային նախագիծը:	
(կառուցապատման եզրակացություն, ՀՀ գործարարության անվանական կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)		
ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ստորագրված) (*) Նշված դրույթների գրառման նպատակով տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սինոպսիզը՝ Մ 1:500)		
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվում է բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:		
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)		
1. Հողամասը գտնվում է	0.7308 հա:	
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշանակմամբ, մակերեսը (հա))		
2. (*) Հողամասի չափերը	Հողամասում առկա են քանդան ներքալա շինություն:	
(ոնիկների բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան ներքալա) առկայությունը (զգտագրվում, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կառավարողը, բարձրագույնը և այլն)		
3. Հողամասի առկա վիճակը	Հայրապետական փողոց:	
(անվանական և փաստացի, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)		
4. (*) Տրանսպորտային պայմանները	Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցություններ:	
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշանակմամբ, մակերեսը (հա))		
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Հայրապետական փողոց, «Արմենիա» ՓԲ:	
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)		
6. (*) Կից հողամասեր	(կից հողգտնողներին անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սինոպսիզի)	
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	(տեղանքում գործող արտադրական, պաշտպանական օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)	
ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԴԱՀԱՆՋԵՐԸ (ստորագրված) (*) Նշված դրույթների գրառման նպատակով տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սինոպսիզը՝ Մ 1:500)		
9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Մշակելի բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծ հ. 20112019-01-0049 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:	
(ընկերվող ՀՀ օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները կամ դրանց քաղաքաշինության դեպքում՝ կազմակերպող (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմաններին, առաջարկություններ ճակատների ձևավորման, տարածքների, արտաքին դռների, պատուհանների համաձայնությունների և գոյանքի լուծումների վերաբերյալ)		
9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	Հարակից բնակելի շենքերից կառույցի վերգերնյա մասի հեռավորությունը նախատեսվող գործող նորմատիվային պահանջների համաձայն:	
9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	Կառույցը նախագծով 2-ից 3 ստորգերնյա և մինչև 18 վերգերնյա հարկերով, ասֆիճանածև նահանջ հորինվածքով մինչև 14 հարկ:	
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	Կառույցի առավելագույն բարձրությունը ընդունել մինչև՝ 61.5մ:	
Հնարավոր է ավելի բարձր ծավալի շենքերի կառուցումը սպասարկող ասֆիճանավանդակների վերելակների հորանների համար:		
9.4. կառուցապատման խտության գործակիցը	(կառույցի (կառույցների) ընդհանուր ծավալների հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը	Վերգերնյա ծավալի համար մինչև՝ 40% Ճանապարհների և սալվածքների համար մինչև՝ 20%	
9.6. կանաչապատման տոկոսը	40% և ավելի	
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)		
9.7. այլ պահանջներ	• Նախագծով նախատեսվող սպասարկման համար երկրորդային ճանապարհի համաձայն «ՀՏԱԴՐՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության կողմից տրված համաձայնեցման: • Նախագծով ապահովվել «Հայաստանի Հանրապետության օդային տրանսպորտի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 3 հունիսի 2003 թվականի N 825-Ն որոշման 36-րդ և 37-րդ կետերով ամրագրված պահանջները: • Նախագծով ապահովվել հարակից տրանսպորտային շահագործման այդ թվում՝ արևահարման ռեժիմի ազդեցության և նորմատիվային պահանջները: • Հարակից գոյանքի լուծումները մշակել համաձայն պարզաբանության առաջարկանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները: • Կենտրոնացված օդափոխության համակարգ չնախատեսվելու դեպքում, կառույցի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հեղափոխական խաղաղության գերծ պահելու համար, նախատեսվելու քաղաքական համակարգ՝ փողային օդափոխիչների տեղադրման համար: • Կառույցի խաղաղության և անվտանգության նշանակության համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հեղափոխական արտաքին ճակատներով օդափոխիչի անվտանգությունը: • Նախագծով լուծվող ավերակառույցների անվտանգ ելումուղի և բացօթյա ավերակայանման խնդիրները:	

9.2. Հավելված 2. Տիպային (առաջին) հարկի հատակագիծ



9.3. Հավելված 3. Ստորգետնյա հարկի տիպային հատակագիծ



9.4. Հավելված 4. Զբաղատակարարման /ջրահեռացման նախագծման տեխնիկական պայման



Միացման տեսակ Նկարագիր	Ջրագիծ	հի հիդրանտի տեղադրման	Կոյուղագիծ	Հեղեղ
տրամագիծ, ճնշում, տեսակ	d=800մ, P=0.4մբմ.	d=800մ, P=0.4մբմ.	d=1200մ	d=600մ
ջրամատ. գրաֆիկ	շուրջօրյա	շուրջօրյա	Z	Z
միացման կետ	Հալարյան փողոցի եզրով անցնող՝ «Արզակամի» d=800մ ջրատարից	Հալարյան փողոցի եզրով անցնող՝ «Արզակամի» d=800մ ջրատարից	Հալարյան փողոցով անցնող՝ Չարենցավան- Երևան d=1200մ կոյուղու կղեկտորին	Հալարյան փողոցով անցնող՝ d=600մ հեղեղատարին
միացման տրամագիծ	համաձայն նախագծի			
ջրաչափի				
տրամագիծը, դասը և տիպը ջրաչափական հանգույցի կետ				
Այլ պահանջներ	ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կատուցել դիտահոր, նախատեսել պոմպ	հակահրդեհային հիդրանտի միացման կետում կառուցել դիտահոր	միացման կետում կառուցել դիտահոր	միացման կետում կառուցել դիտահոր

Հաշվի առնելով, որ «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերությունը ինքնահոս ջրամատակարարում կարող է ապահովել մինչև 4մ ջրի ճնշում, ուստի ամրագրված է նախատեսել մեկ ընդհանուր պոմպակայան՝ շենքերին կից, տեղադրելով ժամանակակից և բարձր ՕԳԳ ունեցող պոմպեր:

Եթե հետագայում շենքերը չեն դիտարկվելու որպես մեկ բաժանող ընդհանուր ջրաչափով, ապա շենքերի ներսում ընդհանուր օգտագործման տարածքներ համընկածող հատվածներում անհրաժեշտ է նախատեսել ջրաչափական արկղեր՝ անհատական ջրաչափերի տեղադրման համար:

Վերը նշված պայմանի չկատարման դեպքում շենքերը կդիտարկվեն որպես մեկ բաժանող ընդհանուր ջրաչափով : Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է պատվիրել նախագծման նախահաշվային փաստաթղթերի կազմումը տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը և այն համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը դիմողի հայեցողությամբ իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ վերջինիս պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ Դիմող անձի հաշվին: Կառուցված մոտ համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ Դիմող անձի հաշվին:

Զբաղատակարարման և ջրահեռացման ծառայություններն մատուցվում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ Զբաղատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքելուց հետո:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի ժամկետով՝ զրանցման օրվանից սկսած, հակառակ դեպքում դրանք ենթակա են վերանայման:

Կառուցման ընթացքում հողային աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտվությունները /համաձայնությունները/:

«Արևմուտք» ՏՏ տնօրենի տեղակալ՝ Ա. Մովսիսյան

Շահագործման տեղամասի պետ՝ Հ. Հովհաննիսյան

Առաջատար մասնագետ՝ Ա. Պետրոսյան

Կատարող՝

VEOLIA
Ջուր

9.5. Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայման

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ
ELECTRIC NETWORKS OF ARMENIA ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան, Ա.Արմենակյան փող. 127

ՆՏՊ-ՃՀԱ-0.4/0301

<<12>> 12 2019թ.


ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ՃՀԱ տրամադրելու համար

Համաձայն ԷՄՕԿ-ի 13.9 կետի պահանջների

Տրվում է՝ «ԲԵՍԹ ՓՐՈՓԵՐԹԻՍ» ՍՊ ընկերության տնօրեն պարոն՝ Է. Օհանյանին (Դիմում՝ 21.11.2019թ.)

Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ. 75/1
Պահանջվող հզորությունը՝ 2400 կՎԱ
Սնող ցանցի լարումը՝ 0.4 կՎ

1. Էլ. մատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ ՏԵ 0644-ի 0.4 կՎ վահանից, վերակառուցելով ՏԵ 0644-ը:
2. Ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ. 75/1 հասցեի տարածքով անցնում են <<Հայաստանի էլ.ցանցեր>> ՓԲ ընկերությանը պատկանող՝ ՏԵ0644-ՏԵ0931, ՏԵ0644-ՏԵ1438 6 կՎ և ՏԵ0644-Հիվանդանոց 0.4 կՎ լարման ստորգետնյա մալուխային գծերը, որոնք անհրաժեշտ է տեղափոխել, ապահովելով՝ ՀՀ Կադավարության՝ 12 հուլիսի 2007 թ. N 961-Ն որոշմամբ հաստատված ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴԱՐԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ-ի 12-րդ գլխի, 3ա ենթակետի պահանջները:
3. Կառուցապատողի(նախաձեռնողի) կողմից էլ.հաղորդման գծերի տեղափոխման նախագիծը համաձայնեցնել «ՀԷՑ» ՓԲ ընկերության՝ <<Մաշտոց>> շահագործման շրջանի պետի և նույն ընկերության տեխնիկական տնօրենի հետ:
4. Հիմնական էլ. մատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ. ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
5. 2-րդ և 3-րդ կետերի պահանջների չկատարման դեպքում՝ սույն տեխնիկական պայմանները համարել անվավեր:

Տեխնիկական տնօրեն  Դ. Գրիգորյան

կատարող Դ. Սահակյան
Հեռ. 59-12-65

9.7. ավելված 7. Շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը

ՇԻՆՄՈՆՏԱՋԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	աշխատանքի նկարագրի և անվանումի մանրամասն նկարագիր	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																																			
		1 ամիս	2 ամիս	3 ամիս	4 ամիս	5 ամիս	6 ամիս	7 ամիս	8 ամիս	9 ամիս	10 ամիս	11 ամիս	12 ամիս	1 ամիս	2 ամիս	3 ամիս	4 ամիս	5 ամիս	6 ամիս	7 ամիս	8 ամիս	9 ամիս	10 ամիս	11 ամիս	12 ամիս	1 ամիս	2 ամիս	3 ամիս	4 ամիս	5 ամիս	6 ամիս	7 ամիս	8 ամիս	9 ամիս	10 ամիս	11 ամիս	12 ամիս
1.	հողի և անտառի հանքահորեր																																				
2.	ձու հողատարած հանքահորեր																																				
3.	առանձնառոտ կա. ծածկի անհատ																																				
4.	հողի և անտառի հանքահորեր																																				
5.	հողի և անտառի հանքահորեր և անտառի հանքահորեր																																				
6.	անտառի հանքահորի անհատական																																				
7.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
8.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
9.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
10.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
11.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
12.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
13.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
14.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
15.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
16.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
17.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
18.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
19.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				
20.	հողի և անտառի հանքահորի և անտառի հանքահորի																																				

9.8. Հավելված 8. Անշարժ գույքի սեփականության վկայական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑՔԻ ՆՎԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 20 նոյեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**
«ԲԵԱԹ ՓՐՈՓԵՐՈՅԻՍ» ՍՊԸ
- ԱՆՇԱՐԺ ԳՈՒՑՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**
Երևան, Աջափնյակ Հայաթյան փողոց 75/1
- ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
Տարածամկետ վճարումով առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիր 11.11.2019թ. թիվ 5373, Համայնքի ղեկավարի որոշում 14.11.2019թ. թիվ 4269-Ա
- ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0206-0033
Մակերեսի չափը (հա)՝ 0.7308
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 20112019-01-0049, գաղտնաբառ՝ WAEPJFRCCVEQ

Փաստաթղթի խնդրումը և վավերականությունը կարող է արտփել կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 1/2

5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-001-0206-0033-001-000	Տարածք	599.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-001-0206-0033-002-000	Օժանդակ շինություն	43 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-001-0206-0033-003-000	Օժանդակ շինություն	72 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-001-0206-0033-008-000	Պահեստ	83.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-001-0206-0033-009-000	Պահեստ	48.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ
Առկա է 279.7քմ ինքնակամ շինություն:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ցաշա Մովսիսյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ղեկավար

ՎԿԱՅԱԿԱՆ N 20112019-01-0049, գաղտնաբառ՝ WAEPJFRCCVEQ

Փաստաթղթի խնդրումը և վավերականությունը կարող է արտփել կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 2/2

«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

9.9. Հավելված 9. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան







Մոնիտորինգ						
Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽ						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակի կողմերի տեղեկացվածություն կառուցապատման վերաբերյալ	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգալիքներ Հանրային լսումներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ Տեղեկատվական պաստառների ստուգումներ	Բողոքներին/առաջարկությունները հասցեագրվել են բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: Բողոքների մոնիտորինգ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շրջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների	Շին տեղամաս և շինհրապարակից 50 մ	Ակնադիտական ստուգումներ	Գրանցամատյանում գրանցված բողոքների	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգալուն ընկալիչներ	շինհրապարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում՝ նախապես մշակված պլանի համաձայն:	քանակն ու կարևորությունը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:		
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Առևտրային-հասարակական գործունեությանը և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարություններ և անվտանգության հարցերը Ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում, սարքավորումներ ի և Նյութերի տեղափոխության համար: Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում	Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևի	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԲԻՍ» ՍՊԸ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր		Շինհրապարակ կատարած ստուգայցեր	վարում: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:		
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում: Շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակը մաքրված է, նույնիսկ և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Շինարարական տեղամաս	Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Բուսականության վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է բուսականության 90% կաշտղականությունը:	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԴԹԻՍ» ՍՊԸ	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈԽ						
11.Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«ԲԵՍԹ ՓՐՈՓԵԴԹԻՍ» ՍՊԸ	

«Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցում

9.10. Հավելված 10. Մասնակիցների ցանկ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ				
Հալաբյան փողոց 75/1 հասցեում նախատեսվող «Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցման վերաբերյալ				
«Այրր» երկուս թաղարի Աջափնյակ վարչական շրջան, Ա Սարգսյան փ. շենք 5				
Ամսաթիվ՝ 03 օգոստոս, 2020թ				
Ժամը՝ 11:00				
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ				
N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն	Զբաղվածություն	Մտորագր.
1.	Գևորգյան յուսիս	առնիսի	բ. Լուսարարացի	
2.	Պերոյ Եսափանյան	Երև. ֆուտբոլի Բ. Գևորգյան		
3.	Ավագյան Արմեն	Ազատիկ Լուս. շրջ. Հասցե՝ Լուս. շրջ. Կենտրոն		
4.	Մկրտչյան Բաժնյա	Ազատիկ Լուս. շրջ. Հասցե՝ Լուս. շրջ. Կենտրոն		
5.	Եսափան Զեփյան	Ազատիկ Լուս. շրջ. Հասցե՝ Լուս. շրջ. Կենտրոն		
6.	Յուսիս Բաղդասյան	Հյուսիս Լուս. շրջ. Հասցե՝ Լուս. շրջ. Կենտրոն		
7.	Արմեն Կարյան	« Բնակարանային » ՍՊԸ		
8.	Լյուսյան Օհանյան	« Բնակարանային » ՍՊԸ		
9.	Արմեն Բաղդասյան	« Բնակարանային » ՍՊԸ		